

Հաստատում եմ՝



Երևանի պետական համալսարանի
գիտական հարցերի գծով պրոռեկտոր
Ռաֆայել Բարխուդարյան

12 նոյեմբերի 2025թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԴԱՎԻԹ ԷԴԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ

«ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ

ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՈՒՆԸ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)»

թեմայով

ԺԲ.00.02- «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեման ուղղված է այնպիսի իրավաքաղաքական երևույթի ուսումնասիրությանը, որի վերաբերյալ դեռևս բացակայում է միասնական սահմանադրաիրավական մոտեցում: Չճանաչված պետությունների գոյությունը սահմանադրական ու միջազգային իրավակարգի սահմանային երևույթ է, որտեղ խաչվում են պետական ինքնիշխանության, ժողովուրդների ինքնորոշման և միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները: Չճանաչված պետությունները հանդես են գալիս որպես սահմանադրականության յուրօրինակ մոդելներ, որտեղ սահմանադրական նորմատիվային բազան ձևավորվում է առանց միջազգային ճանաչման, սակայն ներքին իրավակարգը գործում է լիարժեք սահմանադրական տրամաբանությամբ:

իմաստ է ստանում պետական ինքնիշխանության և ինքնորոշման սահմանադրական հարաբերակցության խնդիրը:

Սահմանադրաիրավական տեսանկյունից չճանաչված պետությունների կարգավիճակի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերաիմաստավորելու պետականության հիմնական սահմանադրական բնորոշիչները՝

- ժողովրդավարական լեգիտիմության,
- սահմանադրական ինքնավարության,
- և սուբյեկտայնության ձևավորման տեսանկյունից:

Թեման համադրում է սահմանադրության տեսությունը պետականության ճանաչման ինստիտուտների հետ՝ բացահայտելով սահմանադրական ինքնիշխանության այն սահմանները, որոնք կարող են գոյություն ունենալ առանց միջազգային իրավական ճանաչման: Նման դիտարկումը գիտական առումով նոր խոսք է՝ հատկապես համեմատական սահմանադրագիտության և պետականության ոլորտներում:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ այն արձագանքում է արդի սահմանադրականության մի հիմնարար մարտահրավերի՝ ինչպես է գործում սահմանադրական իրավունքը այն տարածքներում, որտեղ բացակայում է միջազգային ճանաչումը, սակայն առկա են պետական իշխանության, քաղաքացիության, օրենսդրության և սահմանադրական վերահսկողության ինստիտուտներ:

Ատենախոսության բովանդակությունը կառուցվածքային առումով բաղկացած է ներածությունից, թվով երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու Հավելվածից:

Ներածությունում ներկայացվել են հետազոտական թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմունքները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության գիտագործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափություններն ու առանձնահատկությունները» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆներից, որոնք են՝

1. Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափությունները,
2. Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները,
3. Չճանաչված պետությունները որպես ժամանակակից միջազգային հարաբերությունների գործոն:

Նշված գլխում Հեղինակը ներկայացրել է չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի ընդհանուր օրինաչափությունները, առանձին ուշադրության ու քննարկման առարկա դարձնելով ինքնորոշման իրավունքի իրացման դեպքերը: Ուսումնասիրվել են չճանաչված պետության հիմնախնդիրը, ի մասնավորի բացահայտելով նաև «չճանաչված պետություն» հասկացության բովանդակային տարրերը: Չճանաչված պետությունների հիմնախնդիրը ներկայացվել է որպես համաշխարհային քաղաքական գործընթացի զարգացման և ազդեցության ժամանակակից իրավական և քաղաքական մտքի կարևորագույն ուղղություններից մեկը: Անդրադարձ է կատարվել ազգերի իքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների փոխհարաբերակցության խնդրին:

Ատենախոսության երկրորդ՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակը» վերտառությամբ գլուխը բաղկացած է հինգ պարագրաֆներից, որոնք են՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես սահմանադրական իրավունքի և սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտ,
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացությունը, էությունը և կառուցվածքը,
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խնդիրները, նպատակները, ֆունկցիաները և դրանց սահմանադրական ամրագրումը,
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքների իրագործմանն ուղղված պետության սահմանադրական լիազորությունները,
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիազորություններն ու խնդիրները քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում:

Նշված գլխում ուսումնասիրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես սահմանադրական իրավունքի և սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտի, պետության՝ որպես ամբողջ հասարակության ու ժողովրդի քաղաքական կազմակերպության՝ սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակցի իրավական կարգավիճակի հարցը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակը հարցը դիտարկվել է նաև սահմանադրաիրավական համալիր ինստիտուտի տեսանկյունից: Ներկայացվել են Հեղինակի մոտեցումները պետության ընդհանուր և հատուկ կարգավիճակ հասկացությունների տարբերակման, պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի իրավասուբյեկտության հարցի վերաբերյալ:

Ատենախոսն այս գլխում մանրամասնորեն ուսումնասիրել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական կարգավիճակը՝ ցույց տալով նրա պետական իշխանության ձևավորման, սահմանադրական կարգի պահպանման և իրավական համակարգի ինքնորոշման հիմքեր, ինչի շնորհիվ ատենախոսության այս գլուխն առանձնանում է իր գործնական ուղղվածությամբ: Մասնավորապես քննարկվել են

սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված նորմերի գործնական նշանակությունը, սահմանադրական կարգ հասկացության խնդիրները՝ դրանցում համընդհանրության ու կոնկրետության արտացոլման համատեքստում, վեր են լուծվել քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտում պետության խնդիրները:

Ուսումնասիրվել են կառավարման սուբյեկտների լիազորությունների, իշխանության կենտրոնացվածության և ապակենտրոնացվածության բնույթն ու իրագործման մեխանիզմները:

Ատենախոսության երրորդ՝ «Չճանաչված պետություններն Անդրկովկասում. իրավական կարգավիճակ և ճանաչման հեռանկարներ» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆներից, որոնք են՝

1. Անդրկովկասի չճանաչված պետությունների կազմավորման առանձնահատկությունները,

2. Անդրկովկասի չճանաչված պետությունների ճանաչման հեռանկարները,

3. Անդրկովկասյան հակամարտությունները և Ղարաբաղյան պետության ֆունկցիաների իրականացումը՝ բռնի տեղահանման համատեքստում:

Ատենախոսության շրջանակում առանձնահատուկ ուշադրություն է դարձված Անդրկովկասյան տարածաշրջանի հակամարտություններին, որոնք ձևավորել են ոչ միայն նոր քաղաքական իրականություններ, այլև նոր սահմանադրաիրավական խնդիրներ: Հեղինակը վերլուծում է Անդրկովկասյան հակամարտությունները, ինչպես Լեռնային Ղարաբաղի (Արցախի) պետականության ձևավորման և նրա սահմանադրական ֆունկցիաների իրականացման առանձնահատկությունները, այդ թվում 2023 թվականի բռնի տեղահանման համատեքստում:

Նշված բաժնում գիտական հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ հեղինակը սահմանադրաիրավական մոտեցմամբ է ներկայացնում բռնի տեղահանման հետևանքով առաջացած իրավական խնդիրները, որոնք կարող են դիտարկելով որպես **պետական իշխանության իրականացման սահմանադրական սահմանափակումներ**:

Հեղինակը փորձ է արել նաև ցույց է տալու, որ Ղարաբաղյան պետության սահմանադրական ինստիտուտները Ռիանդային իշխանության գործունեության շարունակականություն, օրենսդրական ընթացակարգերի պահպանում և այլն) շարունակել են գործել նույնիսկ արտաքին ճնշումների և բնակչության մասշտաբային տեղահանման պայմաններում: Գտնում ենք, որ այդ հարցում հաջողված փորձը կարող է վկայել պետականության իրավական կենսունակության մասին:

Այս գլխում կարևորվել է նաև միջազգային իրավունքի նոր սուբյեկտների ճանաչման միասնական համալիր իրավական փաստաթուղթ մշակելու անհրաժեշտության հարցը:

Ատենախոսությունը դիտարկում է սահմանադրական նորմատիվության և փաստացի պետականության միջև առկա հարաբերակցությունը՝ ցույց տալով, որ սահմանադրականությունը կարող է գոյություն ունենալ ոչ միայն ճանաչված, այլև

չճանաչված պետությունների սահմաններում: Լեռնային Ղարաբաղի օրինակով կատարվող վերլուծությունը կարևոր է նաև վերջինիս շուրջ ստեղծված իրավաքաղաքական գործընթացների, մասնավորապես՝

- սահմանադրական իրավունքի հայեցակարգային ընդլայնման,
- ինքնորոշման իրավունքի սահմանադրականացման գործընթացների բացահայտման,
- և միջազգային իրավունքի ու ներքին սահմանադրական կարգերի համադրման մեթոդաբանական նոր մոտեցումների ձևավորման տեսանկյունից:

Այս առումով աշխատանքը նպաստում է սահմանադրաիրավական գիտության՝ զարգացմանը՝ առաջարկելով նոր գիտական գործիքակազմ չճանաչված պետականությունների սահմանադրական ընկալման համար:

Չճանաչված պետությունների սահմանադրաիրավական կարգավիճակի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել ինքնորոշման իրավակարգավորման առանձնահատկությունները, նրանց սահմանադրական զարգացման դինամիկան, ինչպես նաև միջազգային իրավունքի և ներքին իրավունքի փոխազդեցության գործնական դրսևորումները: Այս համատեքստում կարևոր է հաշվի առնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը և դրա շուրջ ձևավորված իրավաքաղաքական զարգացումները:

Ատենախոսությունում արծարծվող հարցերը ոչ միայն ունեն գիտական նշանակություն, այլև կիրառական արժեք՝ կապված տարածաշրջանային անվտանգության, ինքնորոշման իրավունքի սահմանադրական ընկալման և պետական ինքնության պահպանման հիմնախնդիրների հետ: Ատենախոսությունում հեղինակը փորձ է արել բացահայտել, որ սահմանադրականությունն ինքնին ոչ թե ճանաչման, այլ ժողովրդի ինքնիշխան կամքի և ինստիտուցիոնալ կայացման արդյունք է, ինչը նոր տեսանկյուն է սահմանադրական իրավունքի զարգացման համար:

Ատենախոսության տեսական և գիտական արժեքը կայանում է նրանում, որ այն՝

1. **հաստատում է սահմանադրականության համընդհանուր բնույթը**, որը կարող է գործել նույնիսկ չճանաչված պետականությունների սահմաններում՝ որպես ժողովրդի ինքնորոշման իրավունքի սահմանադրական դրսևորում,

2. **մշակում է սահմանադրական սուբյեկտայնության նոր մոդել**, ըստ որի՝ պետականությունը կարող է ունենալ սահմանադրական լեգիտիմություն, եթե այն բխում է ժողովրդի լեգիտիմ կամքից՝ անկախ արտաքին ճանաչումից,

3. **համադրում է միջազգային իրավունքի և սահմանադրական իրավունքի սկզբունքները**, բացահայտելով դրանց միջև փոխգործակցության և հակասության ասպեկտները,

4. **առաջարկում է նոր մեթոդաբանական մոտեցում՝** սահմանադրական իրավունքի համեմատական վերլուծության հիման վրա Արցախի փորձը համեմատելով այլ

չճանաչված պետությունների (Աբխազիա, Հարավային Օսիա, Կոսովո և այլն) ձևավորման պրակտիկայի հետ:

Այսպիսով, ատենախոսությունը լրացնում է սահմանադրական գիտության այն բացը, որը չճանաչված պետությունների իրավական բնույթի գնահատման համար սահմանադրական կարգավիճակի ընկալման նոր տեսական հիմնավորում և գիտական գործիքակազմ է պարունակում: Աշխատանքը թեմայի մասով լրացնում է իրավագիտության մեջ նկատվող հետազոտությունների պակասը, իսկ որոշ հիմնահարցերում նաև տեսական-իրավական վերլուծության բացերը, ուղենշում է նոր հետազոտական թեմաներ: Հետազոտության իրականացման արդյունքում գիտական նորույթ պարունակող հիմնադրույթներն ամփոփված են աշխատանքի եզրակացություններում, պաշտպանության ներկայացվող հիմնադրույթներում:

Ինչ վերաբերում է աշխատանքի գործնական նշանակությանը, ապա պետք է նշել, որ հետազոտական արդյունքները կարող են օգտագործվել սահմանադրական բարեփոխումների, չճանաչված պետությունների սահմանադրական կարգավորման հարցերը շոշափոխ իրավական առարկաների դասավանդման ընթացքում: Հետազոտական արդյունքները կարող են օգտագործվել նաև իրավաբանական բուհերում որպես լրացուցիչ գիտական նյութ «Սահմանադրական իրավունք» և հանրային իրավունքի իրավական ռեժիմի հետ կապված դասընթացների, այնպես էլ միջազգային հանրային իրավունքի և պետության տեսության այլ դասընթացների համար:

Վերը նշվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքում առկա են որոշակի բացթողումներ, թերություններ և վիճելի առաջարկություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Աշխատանքի 2-րդ գլխի 3-րդ ենթագլխում վերլուծելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խնդիրները, նպատակները, գործառույթները և դրանց սահմանադրական ամրագրման հարցերը հեղինակը եզրակացնում է, որ «(...) Այս իմաստով հետազոտության մեջ խնդիր է դրված վերլուծել նաև պետության լիազորությունները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես սահմանադրաիրավական հարաբերությունների սուբյեկտի՝ իրավունքներն ու պարտականությունները (լիազորությունները) հանդիսանում են նրա սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնական տարրը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական լիազորությունների հետևողական իրականացումը ձևավորվում են ամենից առաջ նրա՝ Ժողովրդի, հասարակության, մարդու և քաղաքացու հանդեպ սահմանադրաիրավական պատասխանատվության իրացման արդյունքում: Հետևաբար պետության սահմանադրաիրավական պատասխանատվությունը, այդ հասկացության լայն իմաստով, իրենից ներկայացնում է պետության սահմանադրական լիազորությունների անհրաժեշտ շարունակականություն»:

Այս մտքից հետո հեղինակն առանձնացնում և վերլուծում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության լիազորությունները հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, հիմնականում մարդու իրավունքների համատեքստում: Այս առումով ատենախոսի վերլուծություններն ավելի շատ վերաբերվում են իդեալական պետությանը կամ պետության ընդհանրապես, բայց ոչ ԼՂՀ-ին, որի հիմնական առանձնահատկությունը չճանաչված վիճակն էր: Կարծում ենք, որ այս համատեքստում ատենախոսը ԼՂՀ որպես պետության առաջնային նպատակ պետք է դիտարկեր հանրապետության միջազգային ճանաչմանն ուղղված գործունեությունը, խնդիրը, որը շատ ավելի կարևոր գործառույթ էր այլ գործառույթների համատեքստում, նախադրյալ էր բուն պետության գոյության ու մնացած նպատակների, խնդիրների, գործառույթների համար:

2. Ատենախոսը աշխատանքի 72-րդ էջից սկսած բավականին համակողմանի վերլուծում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության որպես պետության պատասխանատվության մի քանի առումներ: Մասնավորապես, ըստ ատենախոսի «(...) Լեոնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական լիազորությունների հետևողական իրականացումը ձևավորվում են ամենից առաջ նրա՝ ժողովրդի, հասարակության, մարդու և քաղաքացու հանդեպ սահմանադրաիրավական պատասխանատվության իրացման արդյունքում: Հետևաբար պետության սահմանադրաիրավական պատասխանատվությունը, այդ հասկացության լայն իմաստով, իրենից ներկայացնում է պետության սահմանադրական լիազորությունների անհրաժեշտ շարունակականություն:

Պետության սահմանադրաիրավական պատասխանատվության առանձնահատկությունը ամենից առաջ որոշվում է հենց պատասխանատվության սուբյեկտի առանձնահատկությամբ: Պատասխանատվության ավանդական հասկացությունն իր մեջ ենթադրում է այս կամ այն սուբյեկտի պետության հետ պատասխանատվության իրավական կարգավիճակում գտնվելու հանգամանք, որից էլ հենց բխում է իրախախտում կատարելու համար նախատեսված պատասխանատվությունը: Եվ հենց այստեղ է, որ պետությունը ժողովրդի, հասարակության և առանձին անհատի հետ հարաբերություններում հանդես է գալիս որպես պատասխանատվության սուբյեկտ: (...):»

Այստեղից երևում է, որ հեղինակը պետության պատասխանատվությանը դիտարկում է միայն նեգատիվ իրավական իմաստով, անտեսելով պատասխանատվության մեկ այլ՝ հանրային-իրավական պատասխանատվությունը, դրա իրացման իրավական ձևերը՝ ինստիտուտները, որոնց արդյունքում պետությունը պատասխանատվություն կկրի ոչ խախտումների, այլ չգործելու, ոչ արդյունավետ ու սխալ գործելու հետևանքով:

3. Ատենախոսն աշխատանքի 2.4 ենթագլխի եզրափակիչ մասում արձանագրում է. «(...) Հետևաբար պաշտպանության կազմակերպման հարաբերությունների կարգավորումները Արցախի Հանրապետությունում պետք է արժանանային

առանձնահատուկ ուշադրության, վերածվեին յուրահատուկ բնույթի սահմանադրական կարգի հիմունքների՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով: Պետք է համաձայնվել նաև այն հեղինակների հետ, ովքեր Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության աշխարհաքաղաքական առանձնահատկություններից ելնելով հիմնավորում են, որ որ պետական կառուցակարգի կազմակերպական ու գործառնության սկզբունքներից է պաշտպանունակության սկզբունքը, և որպեսզի այդ սկզբունքից բխող իրավական պահանջների իրավական գործողությունը տարածվի և՛ հանրային իշխանության կառույցի, և՛ հասարակության (ժողովրդի), և՛ քաղաքացիների վրա, սկզբունքը պետք է ունենա «սահմանադրական կարգի հիմունքի» իրավական ուժ (...): Հանգելով այսպիսի կարևոր և հիմնարար եզրակացության, հեղինակը չի զարգացնում դա, մասնավորապես դրանից բխող մեթոդոլոգիական ճշգրտումներ չի կատարում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավիճակի, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության նպատակների ու խնդիրների, գործառնությունների սահմանադրական լիազորությունների վերաիմաստավորման հիմնահարցերը քննարկելիս:

Պետք է նշել, որ մատնանշված նկատառումներն ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ, որոնք չեն կարող ազդել Դավիթ Հակոբյանի գիտական աշխատանքի ընդհանուր դրական արժանիքների վրա:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տվել հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշված խնդիրները: Ունի գիտական արժանահավատ մակարդակ, աչքի է ընկնում մոտեցումների ու արդյունքների գիտական նորույթով, ունի ներքին միասնություն, համալիրություն, համակարգվածություն, հարուստ միջոլորտային աղբյուրագիտական հիմքեր: Ակնհայտ է նաև աշխատանքի արդիականությունը և դրա արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Հետևաբար, Դավիթ Էդիկի Հակոբյանի «Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրների սահմանադրաիրավական հետազոտությունը (Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսական հետազոտությունը իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական-կիրառական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն:

հետազոտությունը իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական-կիրառական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Դավիթ Էդիկի Հակոբյանի «Չճանաչված պետությունների իրավական կարգավիճակի հիմնախնդիրների սահմանադրաիրավական հետազոտությունը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակով)» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգով սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ



Վ. Ն. Այվազյան

ԵՊՀ գիտական քարտուղար



Մ. Վ. Հովհաննիսյան

12.11.25թ.